Ավետիք Իսահակյան

Հովհաննես Թումանյանին, 1908թ . , ապրիլի 21

Սիրելի Օհաննես,
Շնորհավոր Զատիկդ. լսեցի, որ տեղ ես գնալու. թե գնում ես՝ բարի ճանապարհ, թե մնում ես՝ մնացի՛ր խաղաղությամբ:
Ուզում էի մոտ օրերս Թիֆլիզ գալ Լեոյի տոնին ներկա լինելու, բայց որ հետաձգած է՝ ուստի վաղը-մյուս օրը մեկնում եմ Էջմիածին, գնում եմ Դվին պեղումները տեսնելու, և Այրարատի սրբազան դաշտի սոսիների փթթումը տեսնելու:
Լեոյի տոնին կհասնիմ այդտեղ, հետո որոշենք՝ մարշրուտ կազմենք թափառելու՝ գնանք Լոռի, Սևան, Ալագյազ, Անի, Մրեն:
Բարևներ տիկին Օլյային, տերտերին, Մուշեղին, Աշխենին, Նվարդին և մյուսներին:
Համբույրներով՝ քո Ավետիք:
Բարևիր Լեոյին, Լևոնին - Շանթին: